ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ (փաստաթղթային կոդ՝ Կ-140-03.10.2017-ՖՎ, ՊԻՄԻ, ՏՀ, ՏՏԳԲ, ՊԱ, ԵԻ, ԱՍ, ԳԿ, ԱՀ-011/0)

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ) քննարկվել է ՀՀ ԱԺ աշխատակազմի տնտեսագիտական վարչությունում:

Նախագիծը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև բյուջետային հարաբերությունները կարգավորող մյուս օրենքներով սահմանված պահանջներին:

Նախագծի ուսումնասիրության և քննարկման արդյունքում ձևավորվել են մի շարք նկատառումներ, որոնցից հիմնականները կայանում են հետևյալում:

1. 2018 թվականին հանրապետության տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով կանխատեսումները բավականաչափ հուսադրող են: Մասնավորապես, ըստ ՀՀ կառավարության կանխատեսումների, առաջիկա տարում ՀՆԱ-ի իրական աճը կկազմի 4.5 տոկոս՝ ընթացիկ տարվա սպասողական 4.3 տոկոսի դիմաց (տես աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1.

Տնտեսական աճի դինամիկան 2014-2018 թվականներին

	2014	2015	2016	2017	2018
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
Տնտեսական աճ (%)	3.6	3.2	0.2	4.3	4.5

Ինչպես նկատում ենք, 2018 թվականի համար կանխատեսվող տնտեսական աճի ցուցանիշը (որն, ի դեպ, դրված է նաև պետական բյուջեի ցուցանիշների հաշվարկման հիմքում), ամենաբարձրն է վերջին 5 տարիների կտրվածքով: Չնայած այն հանգամանքին, որ 2018 թվականի համար կանխատեսվող տնտեսական աճի ցուցանիշը գրեթե հավասար է 2017 թվականին սպասվող ցուցանիշին, սակայն այն էականորեն գերազանցում է 2016 թվականին հանրապետությունում գրանցված տնտեսական աճի մակարդակին: Առաջիկա տարվա համար տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշն, ընդհանուր առմամբ, տեղավորվում է 2017-2022 թվականների ՀՀ կառավարության ծրագրով նախատեսվող

տնտեսական աճի կանխատեսումների շրջանակներում (տարեկան միջին հաշվով 5 տոկոս): Տնտեսական աճի կանխատեսվող մակարդակի ապահովումն, անշուշտ, լուրջ հիմք կհանդիսանա տնտեսության զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման և հարկաբյուջետային ցուցանիշների բարելավման համար: Միաժամանակ, այն կախված կլինի ոչ միայն երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունից, այլև արտաքին տնտեսական գործոններից և համաշխարհային տնտեսության զարգացումներից: Ընդ որում, ՀՀ կառավարության կողմից կանխատեսված մակարդակից 1.6 տոկոս ավելի ցածր ՀՆԱ-ի ձևավորման ազդեցությունը բյուջետային եկամուտների վրա գնահատվում է 7 մլրդ դրամի չափով: Կարծում ենք, նման իրավիճակում պետք է նախատեսվեն այլընտրանքային աղբյուրներ տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի չապահովման դեպքում բյուջետային մուտքերի ճեղքվածքը ծածկելու համար:

2. Համաձայն 2018 թվականի բյուջետային ուղերձի, առաջիկա տարում արդյունաբերությունը կաճի 6.5 տոկոսով, գյուղատնտեսությունը՝ 4.0 տոկոսով, ծառայությունների ոլորտը՝ 4.3 տոկոսով, իսկ շինարարության ոլորտը՝ 3.0 տոկոսով (տես աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2.

Տնտեսության իրական ճյուղերի աճը 2014-2018 թվականներին

	2014	2015	2016	2017	2018
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
ՀՆԱ	3.6	3.2	0.2	4.3	4.5
Արդյունաբերություն	-0.9	6.2	4.8	8.0	6.5
Գյուղատնտեսություն	6.1	13.2	-5.8	-3.0	4.0
Շինարարություն	-4.5	-3.1	-10.8	-3.0	3.0
Ծառայություններ	6.7	1.6	4.1	6.8	4.3

Ինչպես նկատում ենք աղյուսակ 2-ից, 2018 թվականին ամենաբարձր աճը կանխատեսվում է արդյունաբերության ոլորտում, որը կկազմի 6.5 տոկոս: Միաժամանակ, պետք է դրական համարել այն փաստը, որ վերջին տարիներին նման զարգացումների արդյունքում որոշակիորեն փոխվել է նաև ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը (տես գծապատկեր 1-ը):

2014-2018 թվականներին ՀՆԱ-ի կառուցվածքում մեծացել է ծառայությունների տեսակարար կշիռը՝ 45.3 տոկոսից հասնելով 50.4 տոկոսի: Փոխարենը, նվազել են գյուղատնտեսության և շինարարության ոլորտի տեսակարար կշիռները՝

համապատասխանաբար կազմելով 14.7 և 7.3 տոկոս՝ 2014 թվականի 18.1 և 9.3 տոկոսի դիմաց:



Գծապատկեր 1. Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում 2014-2018թթ.

Նման փոփոխությունը, նախ և առաջ, դրական է ներկայանում հարկային եկամուտների ձևավորման տեսանկյունից, քանի որ ՀՀ-ում գյուղատնտեսության և շինարարության ոլորտները հիմնականում հարկազատված են և, համաձայն կառավարության գնահատականների, մասնակցելով ՀՆԱ-ի ձևավորմանը, շոշափելի ավանդ չեն ունենում հարկային եկամուտների ավելացման գործում: Մասնավորապես, ինչպես ցույց են տալիս աղյուսակներ 3-5-ի տվյալները, գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում ձևավորվող ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի հարկման բազաներից նվազեցումները բավականաչափ մեծ մասնաբաժին ունեն ընդհանուր նվազեցումների կազմում:

Աղյուսակ 3.

Սպառումից գանձվող ԱԱՀ-ի 2016-2018թթ նվազեցման ենթակա գումարներն ըստ ՀՆԱ-ի ճյուղերի (մլրդ դրամ)

Ցուցանիշները	2016	2017	2018
	փաստացի	սպասողական	կանխատեսում
1. Նվազեցման ենթակա գումարներն ըստ ՀՆԱ-ի ճյուղերի, որից՝	1,921.7	2,027.7	2,185.2
1.1 Արդյունաբերություն	41.8	46.3	51.0
1.2 Գյուղատնտեսություն	464.0	459.1	492.2
1.3 Շինարարություն	196.0	192.9	204.9
1.4 Առևտուր	134.6	146.7	158.3
1.5 Տրանսպորտ և կապ	58.6	63.9	69.0
1.6 Այլ ճյուղեր	1,027	1,119	1,210

Աղյուսակ 4.

Շահութահարկի փաստացի բազայի գնահատումը (մլրդ դրամ)

Ցուցանիշները	2016	2017	2018
	փաստացի	սպասողական	կանխատեսում
ՀՆԱ	5,079,9	5,409,1	5,850,7
Զուտ շահույթ	2,012.0	2,142.4	2,317.3
Նվազեցման ենթակա գումարները, այդ թվում՝	751.7	757.0	813.1
Գյուղատնտեսությունից	571.3	565.2	606.1
Առևտրից	70.4	76.8	82.9
Մշակող արդյունաբերությունից	15.9	17.6	19.4
Շինարարությունից	34.0	33.5	35.5
Այլ առայություններից	60.1	64.0	69.2
Շահութահարկով հարկման բազա	1,260.3	1,385.4	1,504.3

Աղյուսակ 5.

Աշխատավարձից վճարման ենթակա եկամտային հարկի բազայի գնահատումը (մլրդ դրամ)

Ցուցանիշները	2016	2017	2018
	փաստացի	սպասողական	կանխատեսում
1. ՀՆԱ	5,079.9	5,409.1	5,850.7
2. Աշխատավարձ	1,740.6	1,853.4	2,004.7
3. Աշխատավարձ գյուղատնտեսության ճյուղում	146.4	155.9	168.6
4. Հարկման ենթակա աշխատավարձ (տող 2-տող3)	1,594.1	1,697.5	1,836.1

Հետևաբար, կարևորելով երկրում տնտեսական աճի ապահովումը, միևնույն ժամանակ, պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի բարելավման ուղղությամբ, ինչը կնպաստի հարկային բեռի հավասարաչափ բաշխմանը և, դրանով իսկ, բյուջետային եկամուտների ավելացմանը:

3. Վերջին տարիներին հիմնականում նվազման միտումներ են արձանագրվում հանրապետությունում իրականացվող ներդրումների գծով: Մասնավորապես, 2018 թվականին դրանց ծավալը ընթացիկ տարվա համեմատությամբ կաճի ընդամենը 0.2 տոկոսային կետով և կկազմի ՀՆԱ-ի 18.4 տոկոսը՝ 2017 թվականի 18.2 տոկոսի դիմաց: Ընդ որում, առաջկա տարվա ցուցանիշը զիջում է 2014 թվականի մակարդակին 2.5 տոկոսային կետով (տես աղյուսակ 6-ը):

Աղյուսակ 6.

Ներդրումների մակարդակը ՀՀ-ում 2014-2018 թվականներին

	2014	2015	2016	2017	2018
	փաստ.	**փաստ.**	**փաստ.**	**կանխ.**	**կանխ.**
Ներդրումների մակարդակ (ներդրումներ/ՀՆԱ%)	20.9	20.7	18.4	18.2	18.4

Ակնհայտ է, որ ներդրումների նման մակարդակը դեռևս բավարար չէ տնտեսությունում լուրջ առաջընթացի ապահովման համար, չնայած հարկ է նկատի ունենալ նաև ներդրումների և դրանց արդյունքերի ստացման միջև գոյություն ունեցող ժամանակային լագը: Հետևաբար, անհրաժեշտ է շարունակական և հետևողական քայլեր իրականացնել ներդրումային միջավայրի վրա բացասաբար ազդող գործոնների բացահայտման և չեզոքացման ուղղությամբ:

4. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1 տրիլիոն 307.3 մլրդ. դրամի չափով, 2017 թվականի հաստատված 1 տրիլիոն 210.0 մլրդ դրամի և 2016 թվականի փաստացի 1 տրիլիոն 135.9 մլրդ դրամի դիմաց (տես աղյուսակ 7-ը):

Աղյուսակ 7.

Բյուջետային եկամուտների աճի դինամիկան 2014-2018 թվականներին

Եկամտա-տեսակ	2014թ. փաստացի		2015թ. փաստացի		2016թ. փաստացի		2017թ. հաստատված		2018թ. նախագիծ	
	գումար (մլրդ դրամ)	Աճը նախորդ տարվա համե-մատու-թյամբ (%)	գումար (մլրդ դրամ)	Աճը նախորդ տարվա համե-մատու-թյամբ (%)	գումար (մլրդ դրամ)	Աճը նախորդ տարվա համե-մատու-թյամբ (%)	գումար (մլրդ դրամ)	Աճը նախորդ տարվա համե-մատու-թյամբ (%)	գումար (մլրդ դրամ)	Աճը նախորդ տարվա համե-մատու-թյամբ (%)
Ընդամենը եկամուտներ, որից	1144.8	6.8	1167.7	2.0	1,135.9	-2.7	1,210.0	6.5	1,307.3	8.0
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1064.1	6.3	1067.9	0.3	1,076.9	0.8	1,135.0	5.4	1,247.9	9.9
Պետական դրամա-շնորհներ	17.3	30.1	29.9	72.8	28.4	-5.0	30.9	8.8	35.6	15.2
Այլ եկամուտներ	63.4	10.8	70.0	10.4	30.6	-56.3	44.1	44.1	23.8	-46.0

Այլ կերպ ասած, առաջիկա տարվա բյուջետային եկամուտների պլանավորված ծավալը ընթացիկ տարվա հաստատված ցուցանիշին գերազանցում է մոտ 8.0 տոկոսով կամ 97.3 մլրդ դրամով: Ակնկալվում է, որ 2018 թվականին հարկային բեռի ծանրությունը բնութագրող հիմնական՝ «հարկային եկամուտներ և տուրքեր/ՀՆԱ» ցուցանիշը կկազմի 21.3 տոկոս՝ ընթացիկ տարվա ծրագրային և 2016 թվականի փաստացի ցուցանիշների 21.0 տոկոսի և 21.2 տոկոսի դիմաց: Ընդ որում, նախատեսվում է նաև, որ 2018 թվականին բյուջետային մուտքերի կազմում ամենամեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը և պետական տուրքերը՝ 1 տրիլիոն 247.9 մլրդ. դրամ՝ 2017 թվականի համար հաստատված և 2016 թվականի փաստացի մուտքերի համապատասխանաբար՝ 1 տրիլիոն 135.0 մլրդ. դրամի և 1 տրիլիոն 076.9 մլրդ. դրամի դիմաց: Պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի համապատասխանաբար՝ 35.6 մլրդ. դրամը և 23.8 մլրդ. դրամը:

Ինչպես նկատում ենք աղյուսակ 7-ի տվյալներից, առաջիկա տարում կանխատեսվող եկամուտների աճն, ընդհանուր առմամբ, բավականաչափ բարձր է և գերազանցում է անգամ 2014 թվականին արձանագրված միջին աճը: Միևնույն ժամանակ ընդամենը եկամուտների և հարկային եկամուտների ու տուրքերի մասով այն խիստ բարձր է 2015-2016 թվականների փաստացի ցուցանիշներից, իսկ որոշ չափով բարձր՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշներից (որոնց փաստացի կատարողականի մակարդակը պարզ կդառնա մի քանի ամսից): Ընդ որում, բյուջետային եկամուտների աճի հիմնական մասը նախատեսվում է ապահովել հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնց գծով նախատեսվում է 9.9 տոկոսի չափով ավելացում: Համաձայն բյուջետային ուղերձի, 2018 թվականի համար պլանավորվող հարկային եկամուտներից և պետական տուրքերի 1247.9 մլրդ դրամից 1217.1 մլրդ դրամը (97.5%) նախատեսվում է ապահովել ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների, իսկ 30.8 մլրդ դրամը (2.5%) ըստ տնտեսական գործոնների և լրացուցիչ վարչարարական միջոցառումների:

5. Համաձայն Նախագծի, հարկային եկամուտները և պետական տուրքերը 2018 թվականի համար ծրագրվել են 1 տրիլիոն 247.9 մլրդ. դրամի չափով՝ ընթացիկ տարվա համար հաստատված 1 տրիլիոն 135.0 մլրդ. դրամի և 2016 թվականի փաստացի 1 տրիլիոն 076.9 մլրդ դրամի դիմաց (տես աղյուսակ 8-ը): Հարկ է նշել, որ հարկային եկամուտների կառուցվածքում ԱԱՀ-ին և ակցիզային հարկին բաժին է ընկնում 502 մլրդ. դրամ, որը կազմում է հարկային եկամուտների և պետական տուրքի ընդհանուր գումարի մոտ 40.2%-ը:

Աղյուսակ 8.

ՀՀ 2014-2018 թվականների պետական բյուջեների եկամուտների կառուցվածքը

Եկամտատեսակ	2014թ. փաստացի		2015թ. փաստացի		2016թ. փաստացի		2017թ. հաստատված		2018թ. նախագիծ	
	գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատ-մամբ (%)	գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատ-մամբ (%)	գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատ-մամբ (%)	գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատ-մամբ (%)	գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատ-մամբ (%)
Ընդամենը եկամուտներ, որից	1144.8	25.3	1167.7	23.1	1,135.9	22.4	1,210.0	22.4	1,307.3	22.3
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1064.1	23.5	1067.9	21.2	1,076.9	21.2	1,135.0	21.0	1,247.9	21.3
Պետական դրամաշնորհներ	17.3	0.4	29.9	0.6	28.4	0.6	30.9	0.6	35.6	0.6
Այլ եկամուտներ	63.4	1.4	70.0	1.4	30.6	0.6	44.1	0.8	23.8	0.4

Ինչպես նկատում ենք աղյուսակ 8-ի տվյալներից, վերջին տարիներին հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության առումով գրեթե էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Անշուշտ, տվյալ ցուցանիշի բավականաչափ ցածր մակարդակն էականորեն սահմանափակում է պետության ծախսային պարտավորությունների ընդլայնման հնարավորությունները և, այս տեսանկյունից, առաջիկա տարիներին դրա աստիճանական բարձրացումը, կարծում ենք, պետք է դառնա ընդհանուր տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Ընդ որում, այն պետք է իրականացվի ինչպես համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի բարելավման, այնպես էլ տնտեսության հարկային ներուժի լիարժեք օգտագործման և հատկապես ստվերային հատվածի կրճատման ուղղություններով:

Այս առումով, հանրապետությունում առաջիկա տարիներին իրականացվելիք տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը, կարծում ենք, պետք է լինի ոչ միայն տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովումը, այլև դրա կառուցվածքի բարելավումը՝ բյուջետային եկամուտների ավելացման տեսանկյունից, ինչն էլ ընդհանուր առմամբ նախատեսված է ՀՀ կառավարության գործունեության ծրագրով:

7. 2018 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների գերակշիռ մասը կապահովվի ավելացված արժեքի հարկից ստացվելիք մուտքերի հաշվին, ինչը կկազմի մոտ 422.3 մլրդ դրամ: Փաստորեն, միայն ավելացված արժեքի հարկից ստացվող մուտքերը կկազմեն ընդհանուր հարկային մուտքերի (ներառյալ պետական տուրքը) 33.8 տոկոսը: Միևնույն ժամանակ, շահութահարկից և եկամտային հարկից ստացվող բյուջետային մուտքերն առաջիկա տարվա համար նախատեսված են համապատասխանաբար՝ 130.0

մլրդ. դրամի (հարկային մուտքերի 10.4 տոկոսի) և 367.9 մլրդ. դրամի (հարկային մուտքերի 29.5 տոկոսի) չափով (տես աղյուսակ 9-ը):

Աղյուսակ 9.

Հարկային եկամուտներ ծավալը ՀՀ-ում 2014-2018թթ. (մլրդ. դրամ)

	2014 փաստացի	2015թ. փաստացի	2016թ. փաստացի	2017թ. հաստատված	2018 նախագիծ
Ավելացված արժեքի հարկ (մլրդ դրամ)	440.4	423.9	391.1	384.4	422.3
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ (տոկոս)	41.4	39.7	36.2	33.9	33.8
Ակցիզային հարկ (մլրդ դրամ)	50.6	49.0	59.7	63..6	80.0
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ (տոկոս)	4.8	4.6	5.5	5.6	6.4
Շահութահարկ (մլրդ դրամ)	103.6	103.7	127.2	134.2	130.0
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ (տոկոս)	9.7	9.7	11.8	11.8	10.4
Եկամտային հարկ (մլրդ դրամ)	289.2	311.7	332.7	347.2	367.9
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ (տոկոս)	27.2	29.2	30.8	30.6	29.5

Ընդհանուր առմամբ, ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության հաստատումը հարկային համակարգի արդյունավետության կարևոր նախապայմաններից մեկն է հանդիսանում: Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին արձանագրված զարգացումների արդյունքում որոշակիորեն փոխվել է ուղղակի և անուղղակի հակեր հարաբերակցությունը՝ ի հօգուտ առաջինի: Սակայն վերլուծությունները ցույց են տալիս, որ դա հիմնականում տեղի է ունեցել եկամտային հարկի ներդրմամբ և դրանում որոշակի կառուցվածքային փոփոխությունների իրականացմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անուղղակի հարկերի գծով փաստացի բեռն ընկնում է վերջնական

սպառողների վրա, կարող ենք արձանագրել, որ հանրապետությունում հարկային բեռի հիմնական ծանրությունը կրում են ֆիզիկական անձինք: Մասնավորապես, միայն ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և եկամտային հարկի գծով մուտքերն առաջիկա տարում կկազմեն ընդհանուր հարկային եկամուտների 70 տոկոսը: Կարծում ենք, որ այս փաստը, ինչպես նաև անուղղակի հարկերի տեսակարար կշռի նվազման կայուն միտումը, հուշում են հարկաբյուջետային քաղաքականության մեջ նոր խնդրի առաջացման մասին, այն է՝ հետևողականորեն նպաստել ուղղակի հարկային եկամուտների կառուցվածքում շահութահարկի տեսակարար կշռի բաձրացմանը, ինչն էլ թույլ կտա ՀՀ հարկային եկամուտների կառուցվածքը հնարավորինս մոտարկել միջազգային լավագույն պրակտիկային:

6. Հարկային ներուժի գնահատման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հարկային ծախսերի մակարդակը (հարկային ծախսերը գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտներն են կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսերն են, քանի որ հարկային ծախսերը հանգեցնում են համապատասխան գումարի չափով բյուջետային եկամուտների կրճատման): 2018 թվականին միայն երեք հարկատեսակների գծով հարկային ծախսերի մակարդակը պետք է կազմի 395,490 մլրդ դրամ (տես աղյուսակ 10-ը), իսկ 2016-2017 թվականներին նշված հարկատեսակների մասով հարկային ծախսերի ընդհանուր գումարները համապատասխանաբար կազմել են 340,291 մլրդ դրամ (կշիռը ՀՆԱ-ի մեջ 6.99 տոկոս) և 381,490 մլրդ դրամ (կշիռը ՀՆԱ-ի մեջ 7.00 տոկոս):

Անշուշտ, հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը բավականաչափ մեծ ծավալ է կազմում՝ հատկապես ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում և, ըստ էության, կարող է արդարացված լինել միայն հարկային արտոնությունների տրամադրման արդյունքում ստացվելիք համարժեք օգուտների ապահովման պարագայում: Տվյալ պատկերը ձևավորվել է հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականության այն ուղղության շնորհիվ, ըստ որի երկարաժամկետ հատվածում կայուն հարկային բազա ստեղծելու նպատակով շարունակաբար հարկային և մաքսային որոշակի արտոնություններ են տրամադրվում տնտեսության իրական հատվածի այն տնտեսավարողներին, որոնք ունեն զարգացման լուրջ ներուժ և միաժամանակ՝ ձեռնարկությունների տեխնիկական ու տեխնոլոգիական վերազինման կարիք:

Աղյուսակ 10

Հարկային ծախսերի գնահատականը ՀՀ-ում 2018 թվականին (մլն դրամ)

	Հարկային ծախսերի տեսակը	Հարկային ծախսերի չափը	Կշիռը հարկային եկամուտների մեջ	Կշիռը ՀՆԱ-ի մեջ
1	**ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝**	**314,118**	***25.19%***	***5.37%***
1.1.	*գյուղատնտեսություն*	27,553	*2.21%*	*0.47%*
1.2.	*առողջապահություն*	35,914	*2.88%*	*0.61%*
1.3.	*կրթություն*	24,984	*2.00%*	*0.43%*
1.4.	*ֆինանսներ և ապահովագրություն*	35,462	*2.84%*	*0.61%*
1.5.	*ԱԱՀ-ի շեմ*	38,094	*3.05%*	*0.65%*
1.6.	*այլ արտոնություններ*	152,112	*12.20%*	*2.60%*
2	**Շահութահարկի գծով, այդ թվում՝**	**21,842**	***1.75%***	***0.37%***
2.1.	*գյուղատնտեսություն*	2,795	*0.22%*	*0.05%*
2.2.	*ԱԱՀ-ի շեմ*	19,047	*1.53%*	*0.33%*
3	**Եկամտային հարկի գծով՝ այդ թվում**	**59,530**	***4.77%***	***1.02%***
3.1.	*գյուղատնտեսություն*	59,530	*4.77%*	*1.02%*
Ընդամենը		**395,490**	***31.72%***	***6.76%***

Մեր կարծիքով, տնտեսական քաղաքականության տվյալ ուղղությունը շատ կարևոր է նույնիսկ բնակչության սոցիալական ոչ այնքան բարվոք իրավիճակի պայմաններում, քանի որ դրա հաջող իրականացումը թույլ կտա ապագայում զգալիորեն և շարունակաբար բարձրացնել բնակչության սոցիալական ապահովության և սոցիալական պաշտպանվածության մակարդակը: Մյուս կողմից, կարծում ենք, խորհրդարանական կառավարման անցման համատեքստում կարևոր է նաև տրամադրված հարկային, մաքսային և մյուս արտոնությունների արդյունքների ու դրանց արդյունավետության պարբերաբար գնահատման (իսկ հնարավորության դեպքում՝ մշտադիտարկման) գործընթացի իրականացումը, որի կապակցությամբ առաջիկա տարվա ընթացքում նպատակահարմար կլիներ հատուկ ուսումնասիրություններ կատարել՝ պարզելու համար թե ամենատարբեր արտոնությունների տրամադրման հետևանքով փաստացի ի՞նչ օգուտներ է ստացել պետությունը, ո՞ր տիպի հարկային արտոնությունների տրամադրումն է եղել արդարացված, ինչպե՞ս են ազդել այդ արտոնությունները տնտեսական աճի և տնտեսության ճյուղային կառուցվածքի վրա և այլն, ինչն էլ թույլ կտա փաստարկված ճշգրտումներ մտցնել հարկային քաղաքականության այս կարևոր հատվածում:

7. Առաջիկա բյուջետային տարում պետական բյուջեի ծախսային մասը կկազմի 1 տրիլիոն 464.2 մլրդ. դրամ, ինչն ընթացիկ տարվա հաստատված ցուցանիշը գերազանցում է 104.1 մլրդ. դրամով: Բյուջեի դեֆիցիտը պլանավորվում է 156.9 մլրդ. դրամի չափով՝ ընթացիկ տարվա համար հաստատված 150.1 մլրդ դրամի դիմաց: Ինչ վերաբերում է բյուջետային ծախսերի կառուցվածքին, ապա ծախսերի ամբողջ ծավալի 88.2%-ը կամ 1 տրիլիոն 291.8 մլրդ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, իսկ 11.8%-ը կամ 172.4 մլրդ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին (տես աղյուսակ 11-ը):

Աղյուսակ 11.

ՀՀ 2014-2018թթ. պետական բյուջեների ծախսերը (մրդ. դրամ)

Գործառնական դասակարգման խմբերի անվանումները	2014 փաստացի	2015 փաստացի	2016 փաստացի	2017 հաստատված	2018 նախագիծ
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	1.235.1	1.408.9	1.449.1	1.360.1	1.464.2
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	217.3	281.4	292.1	265.0	274.6
Պաշտպանություն	190.0	198.5	225.9	209.8	246.8
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	104.8	122.0	100.8	102.4	102.3
Տնտեսական հարաբերություններ	83.3	109.8	131.1	93.6	147.8
Շրջակա միջավայրի պաշտպանություն	4.7	5.6	4.5	10.0	11.6
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	31.3	39.2	25.6	14.3	17.5
Առողջապահություն	76.6	86.1	88.6	85.9	80.1
Հանգիստ, մշակույթ և կրոն	21.4	30.4	26.6	26.3	26.7
Կրթություն	115.8	122.3	122.4	127.6	126.9
Սոցիալական պաշտպանություն	342.5	383.7	396.8	408.9	408.6
Հիմնական բաժիններին չդասվող պահ. ֆոնդեր	47.0	29.9	15.1	16.3	21.1

Ինչպես կարելի է նկատել աղյուսակ 11-ի տվյալներից, ընդհանուր առմամբ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով պահպանվել է դեռևս նախորդ տարիներին ձևավորված ծախսերի ուղղվածությունը: Մասնավորապես, սոցիալական բնագավառի

ծախսերի տեսակարար կշիռը 2018 թվականի պետական բյուջեի ծախսերում կկազմի 42.0 տոկոս, պաշտպանության, ազգային անվտանգության և հասարակական կարգի պահպանության համակարգերի ծախսերը՝ 22.2 տոկոս, տնտեսության ճյուղերի ծախսերը՝ 12.1 տոկոս, պետական պարտքի սպասարկման ծախսերը՝ 9.6 տոկոս, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններին ցուցաբերվող աջակցությունը՝ 3.4 տոկոս: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ ծախսային քաղաքականության առումով հիմնական ուղղությունները մնալու են նույնը և բյուջետային ծախսերի գերակշիռ մասը՝ 64 տոկոսն ուղղվելու է սոցիալական ոլորտի և պաշտպանության բնագավառների ֆինանսավորմանը: 2018 թվականի բյուջեի նախագծով ծախսերի աճ է նախատեսվում պաշտպանության (17.6 տոկոսով), տնտեսական հարաբերությունների (57.9 տոկոսով) և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (3.6 տոկոսով) ուղղությամբ: 2018 թվականի պետական բյուջեի նախագծով պլանավորվող ծախսերի գերակշիռ մասը՝ 42 տոկոսը կկազմեն սոցիալական բնագավառի ծախսերը: Ընդ որում, առողջապահության համար պլանավորվող ծախսերը կնվազեն 5.8 մլրդ դրամով (կամ 7.2 տոկոս), իսկ սոցիալական պաշտպանության ծախսերը կմնան գրեթե անփոփոխ՝ 2018 թվականին կազմելով 408.6 մլրդ դրամ 2017 թվականի 408.9 մլրդ դրամի դիմաց:

8. Նախագծով 2018 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 2.7 տոկոսի չափով և կազմում է 156.9 մլրդ. դրամ: Դեֆիցիտի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել արտաքին ու ներքին աղբյուրների հաշվին, որոնք կկազմեն համապատասխանաբար՝ 79.8 մլրդ դրամ և 77.1 մլրդ դրամ:

Ինչ վերաբերում է ՀՀ արտաքին պարտքին, պետք է նշել, որ 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է 4.806 մլն. ԱՄՆ դոլար, 2017 թվականի տարեվերջի դրությամբ նախատեսվում է, որ այն կհասնի մոտ 5.543 մլն. ԱՄՆ դոլարի, իսկ 2018 թվականի համար ծրագրվող ցուցանիշը կազմում է 5.836 մլն. ԱՄՆ դոլար: Փաստորեն, արտաքին պարտքի աճը 2016-2018 թվականների համար կկազմի մոտ 1.030 մլն. դոլար (տե՛ս աղյուսակ 12-ը):

Ինչպես երևում է աղյուսակ 12-ից, 2016-2018 թվականների տարեվերջի դրությամբ պետական պարտքի գերակշիռ մասը (համապատասխանաբար՝ 80.9%-ը, 81.4% և 81.0%-ը) բաժին է ընկնում արտաքին պարտքին: Նման իրավիճակն, ըստ էության, օրինաչափ երևույթ է դարձել ՀՀ-ի համար՝ մեկ անգամ ևս ուշադրություն հրավիրելով ֆինանսավորման ներքին աղբյուրների զարգացման և ֆինանսական ներքին ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդրի արդիականության վրա:

Աղյուսակ 12.

ՀՀ պետական պարտքը 2016-2018 թթ. (մլն. ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	31.12.2016թ.	31.12.2017թ.	31.12.2018 թ.
Պետական պարտք՝ ընդամենը	5,942	6,813	7,209
ՀՆԱ-ի նկատմամբ %	56.6	60.3	59.0
այդ թվում՝			
արտաքին պարտք	4,806	5,543	5,836
ՀՆԱ-ի նկատմամբ %	45.8	49.0	47.7
որից՝ կենտրոնական բանկի պարտք	505	580	598
ՀՆԱ-ի նկատմամբ %	4.8	5.1	4.9
ներքին պարտք	1,137	1,269	1,373
ՀՆԱ-ի նկատմամբ %	10.8	11.2	11.2

ՀՀ պետական պարտքի մեծությունը 2018 թվականի վերջին կհասնի «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված սահմանափակման (այն է՝ «Պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը) եզրագծին, ինչը պահանջում է պետական պարտքի կառավարման ուղղությամբ համապատասխան քայլերի իրականացում:

ՀՀ ԱԺ աշխատակազմի
տնտեսագիտական վարչության պետ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ

ՀՀ ԱԺ աշխատակազմի
տնտեսագիտական վարչության
տնտեսական փորձաքննության բաժնի վարիչ՝ Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

27.10.2017թ.